

տխուր, ամէնէն ամօթալի բանագործութիւններու  
 թատրը սարքելու. այսպիսի փափուկ ժամանակի  
 մը մէջ Կոլտա զուարթ եւ ընդարձակ հորիզոն մը  
 գծեց Պոլսոյ պատրիարքութեան շուրջը՝ որուն  
 նշանակելի կէտերը եղան Երուսաղէմ նախ՝ եւ ետքը  
 Էջմիածին: Իսկ Պոլսոյ պատրիարքութիւնը, կար-  
 ծուածէն աւելի դիրքի եւ հեղինակութեան տէր  
 եղաւ: Այս ամենուն մէջ շատ մեծ նշանակութիւն  
 ունի Կոլտի Կոնստանտինոպոլսեան անդամաց  
 պատրիարքութիւնը՝ երբ պատրիարքութեան տեն-  
 շանքով տանջուողներ, թէ Էջմիածնի նուիրակներ,  
 թէ առաջնորդներ, թէ Պոլսոյ մէջ լծացած  
 եկեղեցականներ, ազգին աղբիւրի պէս յորդող  
 գրամները ամէն օր պատուանդան կ'ընէին պատրի-  
 արքական Աթոռին բարձրանալու:

Եկեղեցականն եւ է բարեկարգութեան համար  
 արդէն բաւաւան է Կոնստանտինոպոլսեան անդամաց  
 հաստատամիտ գործունէութիւն, անկից ետքը  
 ալ ինքնին կը քալէ գործը. այս պայմաններուն մէջ,  
 անշուշտ, մեծ բարեբախտութիւն մըն է գլխաւոր  
 աթոռներուն մէջ տիրող աննենգ ու աննկատ  
 համաձայնութիւնը, զիրար հասկնալու խելքը.  
 բան մը, զոր Կոլտա յաջողցուց յանձին Շղթայակրի,  
 Երուսաղէմի Աթոռին վրայ, եւ յանձին Կարապետ  
 ու Աբրահամ Կաթողիկոսներու, Էջմիածնի Աթոռին  
 վրայ:

Կոլտին այս բոլոր յաջողութիւնները՝ եկեղե-  
 ցական մը միայն լաւ չգատեց. Ինքը թէ եւ կարող,  
 Կոլտի պէս արդիւնաւոր, պատկառելի դէմք  
 մ'եղաւ Եկղ. պատմութեան մէջ, բայց նախանձը,  
 որ շատ անգամ ամէնէն մեծ գանկերն իսկ կը մթն-  
 ցընէ, գլխաւոր պատճառ պէտք է գնել այն դա-  
 տումին: Երեւանցի Սիմէոն Կաթողիկոսն է ան.  
 Սիմէոնը, որ իր ուսումն ու սկզբունքներն Ամրտոլի  
 «համալսարան» ին կը պարտի, սա տարբերութեամբ